



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևացափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պ. ԱՍԱՄԲՈԼՅՅԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿՈՂԳԵՐԱՑԻՎ
ՇԱՐԺՈՒՄԸ^{ՅԵՎ}
ԿՈՐՀԵԴԱՅԻՆ
ԿՈՂԳԵՐԱՑԻՎԱՅԻՆ

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿՈՈԹԻ

17392

11
11

334 (47+57)

Պ. ԱՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՄԻԶԱՋԳՎՅԻՆ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՈՒՄԸ

Ց Ե Վ

ԽՈՐՃՐԴՅԻՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ

(Յերկրորդ հրատարակություն)

17392

A II/512



ՀԱՅԿՈՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1980 թ.

100

334 (47+57)

Գ. ԱՍԱՄԲՈԼ.880.Ն

ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ԾԱՐԺՈՒՄԸ


Ց Ե Վ

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ

(Յերկրորդ հրատարակություն)

17392

A 41512



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1980 թ.

ՀԱՅԿՈՈՎԻ ՏԵՐԱՎՆ
ՄԱՐԹԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱԾՈՒՅԹ. № 5242բ.
ՏԵՐԱՎ 8000 մ. 196

ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՈՐԸ

1

ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոռպերացիայի միջազգային տոնի նշանակությունը շատ մեծ է։ Ահավասիկ իններրորդ տարին և, վոր մենք տոնում ենք այդ որը և նա տարեց տարի ավելի յե մասսայական ընույթ ստանում։ Կոռպերատիվների միջազգային Միություն «Ալիանսի» կենտրոնական կոմիտեն Միլան քաղաքում 1922 թվականին գորոշում է հանում՝ ամեն տարի հուլիս ամսի առաջին շաբաթ որը հայտարարներ կոռպերացիայի միջաեզրային որ։ Կոռպերացիայի միջազգային որդությունը նպատակն է ցուցադրել վողջ աշխարհին կոռպերատիվ մասսաների համերաշխությունը և կոռպերատիվ կազմակերպությունների ուժը, վորպես կոռպերացիայի միլիոնավոր աշխատավորության տնտեսական ազատագրության մի միջոց և ընդհանուր խաղաղության գրավուկան։

Կոռպերացիայի միջտղային որը միզ համար ստանում է չտփազանց մեծ նշանակություն նաև նրա համար, վոր ամբողջ աշխարհում կոռպերատիվ կազ-

մակերպությունների շուրջը, գլխավորապես, սպառո-
դական կոռպերացիայի, նրա բանվորական սեկտորի
շուրջը համախմբվում և 70 միլիոնից ավելի կոռպե-
րացիան աշխատավորություն, ընդգրկելով մոտ 53
տարբեր յերկրներ:

Մեր պայմաններում, յերբ դասակարգային կոիմի
տմբողջ աշխարհում ստանում ե չտեսնված սրություն,
յերբ մենք ապրում ենք քաղաքացիական ահեղ կոիվ-
ների նախորյակին, յերբ կոմունիստական շարժումը
ըստոր յերկրներում գնալով ավելի և ավելի միլիոնա-
վոր մասսաներ և գրավում ե նրանց կազմակերպում
սուածիկա դասակարգային մեծ կոիվների համար, իսկ
մյուս կողմից՝ միջազգային բուրժուազիան և նրա հետ
միասնական ճակատ կռվմած սոցիալ-դեմոկրատական
հականեղափոխական կուսակցություններն, իրենց ու-
ժերը համախրմած, բոլոր միջոցները գործադրում են
վճռառեան հարված հասցնելու բանվոր դասակարգի
պայքարին: Այս պայմաններում, բնական և, կոռպե-
րացիայի միջազգային որը ըստ եյության հանդիսանում ե մի
հզորագույն միջոց բանվոր դասակարգի հեղափոխա-
կան պայքարը մթագնելու, թուլացնելու համար:
Նրանք իրենց սեփորմիստական և պահպանողական
քաղաքականությամբ ճգնում են հիմնավորել աշխա-
տանքի և կաղիտավալի մեջ խաղաղ, ներդաշնակ հարա-
բերություններ հաստատելու գործը: Նրանք միլիոնա-

վոր կոռապերացված աշխատավորների ուշադրությունը
կենարունացնում են առողջա մանր տնտեսական խըն-
դիրների, նոր անդամներ գրավելու, տռնտուրն ուժե-
ղացնելու և կոռապերատափները անտեսապես ուժեղաց-
նելու հարցերի շաւրջը, Նրանք խոր լուսնթյան են
մատնում այն բոլոր մարտական լողունգները, կեն-
սական խնդիրները. Վոր այսոր դրված և հեղափոխա-
կան պրոլետարիատի առաջ:

Դրա հակառակ, դասակարգային հեղափոխական
տեսակետից, կոռապերացիայի միջազգային որը պետք
է լինի ամբողջ բանվոր դասակարգի համերաշխության
մի ցույց, պետք և ծառայի բանվորական շարժման
պրոֆմիությունների և հեղափոխական կուսակցու-
թյունների համար միասնական պայքարի որ։ Այդ
պայքարը պետք և ուղղված լինի կապիտալիզմի հար-
ձակման, աշխատավարձի նվազեցման, աշխատանքի
ժամերի բարձրացման, պատրաստվող պատերազմի և
ֆաշիզմի դեմ։

Մի խոսքով կոռապերացիան իրապես պետք և
դառնա պրոլետարական մասսաների դասակարգային
շահերի պաշտպան կազմակերպություն և սոցիալիզմի
կառուցման համար խկական զենք։ Այս խոշոր պայ-
քարի գործում առանձնապես մեծ դեր ունի կատա-
րելու խորհրդային կոռապերացիան. նա վոչ միայն ա-
վանդարդը պետք և լինի միջազգային հեղափոխական
կոռապերացիայի մարտական լողունգները կենսագոր-
ծելու խնդրում, այլ և, վորպես մեր սոցիալիստական
շինարարության հզորագույն ազդակներից մեկը, պետք
և ցուցադրի իր հսկայական նվաճումները և գործա-
կան ձեռնարկումների միջոցով ավելի խորացնի իր

աշխատանքները։ Նա իր կենդանի որինակով պետք է արագացնի բուրժուական յերկրների կոռուպտում մասսանների հեղափոխականացման պրոցեսը։

«Ալիանսը» հանդիսանում է միջազգային կոռուպտոցիայի միակ ինտերնացիոնալը, վորի զեկավարությունը գտնվում է սեփարմիստների ձեռքին։ Սակայն խորհրդային կոռուպտոցիան, վոր «Ալիանսի» ամենաազգեցիկ անդամն ե՝ թե իր քաղաքական կշռով և թե քանակական տեսակետից, բավականին խոշոր աշխատանք և տարել և տանում է միջազգային կոռուպտութիվ շարժման հեղափոխականացման համար։ Պետք ե ասել, վոր «Ալիանսի» ազգեցությամբ տարվաղ աշխատանքը կումունիստական ինտերնացիոնալի միջազգային քաղաքականության կարևոր արագացություններից մեծն եւ Այդ աշխատանքներով խորհրդային հասարակայնությունը մինչև որս շատ քիշ չտվով և զրադիել, այդ պատճառով շատ կարենոր ե, վոր մեր կոռուպտոցված մասսաներն իրադեկ լինեն այն պայքարին, վոր այսոր տեղի յե ունենում նոր և հին կոռուպտությունների բանակներում։

II

„ԱԼԻԱՆՍ“ ՑԵՎ ՆՐԱ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Միջազգային կոռուպտոցիայի «Ալիանսը» (միություն) կազմակերպվել ե 1895 թ. Լոնդոնում։ Կոռուպտութիվ ինտերնացիոնալ կազմակերպելու միտքը հղացել ե 19-րդ դարի կեսերին մի այնպիսի ժամանակը, յերբ ամբողջ բուրժուազիան սարսափի մեջ եր առա-

ջին բանվորական միությունները կազմակերպելու հետևանքով, վորոնց միջոցով ուժեղ պրոպագանդայի յերմղվում հոգուտ հեղափոխական դաստկարգային պայքարի. Մարքսի կողմից առաջին ինտերնացիոնալի կազմակերպումն ել ավելի անհրաժեշտություն ե գարձնում բոլոր ահսակի մանր բուրժուական ուժորմիստական տարրերի համար, հիմք դնելու մի անյնպիսի կազմակերպության, վոր հնարավոր լիներ մարքսյան ինտերնացիոնալի դաստկարգային անողոք պայքարի լողունղին հակագրելու դաստկարգերի համերաշխության, քաղաքական կովի բացասան սկզբունքը Այդ ժամանակաշրջանը, վորի ընթացքում կոռպերատիվ կազմակերպությունները, գլխավորակիս սպառողականը, բավական մեծ ծավալ եյին ստացել և առետրտական կապիտալի շահագործման դեմ խիստ պայքար եյին մղում, շատ հարմար տսպարեղ եր ներկայացնում պրոլետարական մասսաների հեղափոխականացման դեմ պայքարելու համար:

Կոռպերատիվ ինտերնացիոնալի կազմակերպման գլխավոր հեղինակներն եյին հանդիսանում Անգլիայում՝ քրիստոնեական սոցիալիստները և Ֆրանսիայում՝ ականավոր ուժորմիստ ուտոպիստ կոռպերատորներ Շարլ Ֆիդը և այլն, հեղափոխական մարքսիստների անողոք դաստկարգային կովի թեորիային, վորպես հակագրություն Շարլ Ֆիդը գրում ե. «Մեր նպատակները մեկ են, բայց տարբեր են նրանց հասնելու ճանապարհները: Մենք հսարավոր ենք համարում ստեղծել մեծ քանակությամբ նոր հարստություն, սակայն առանց բուրժուազիայի ստացվածքն եքսպրոպրացիայի յենթարկելու Մենք արտահայտվում ենք

դաստկարգային պայքարի դեմ, հեղափոխական և երս-
պրոպրացիայի մեթոդի դեմ: Մենք տարբերվում ենք
սոցիալիստներից նրանով, վոր անհրաժեշտ չենք տես-
նում մասնավոր սեփականության վոչնչացումը, մինչև
իսկ արագըբական միջոցների նկատմամբ: Մենք խու-
սափում ենք հորիզոնական բարեփոխության
յինթարկի գոյություն ունեցող անտեսական կարգերը:
Այս հիմնական սկզբունքներն են ուղեցույց յիշել
սեփորմիսաների ամրող գործունեյության համար:
Նրանք յիրկար ու ձիգ աարիներ սերունդներ են զա-
տիարակել բարենորոգչական, պահպանողական վողով,
թուլացնելով բանօր գասակարգի հեղափոխական զա-
սակարգային պայքարի թափը:

Իսկ Անգլիայում քրիստոնեյական սոցիալիստ-
ներն, աշխատանքի և կապիտալի մեջ լիակատար հա-
մերաշխություն ստեղծելու համար, կոռպերատիվ ին-
տերնացիոնալի հիմքում դնում են, «Կոռպերատնշիպը-ի
գործնական սկզբունքը, վորի իմաստն այն և՝ թե բան-
վորները պետք ե մասն ունենան կոռպերատիվ շինու-
րարության սաացած շահույթից: Ճիշտ և կոռպերա-
տիվ ինտերնացիոնալի հետագա զարգացման շրջանում
«Կոռպերանշիպը-ի գաղափարն առանձին ընդունելու-
թյուն չի գտնում, սակայն, նա «Ալիանսի» կազմա-
կերպման և ձեակերպման գործում պակաս նշանակու-
թյուն չի ունենում: Կոռպերատիվ ինտերնացիոնալի
հիմնավորման հզորագույն զենքերից մեկը քաղաքա-
կան չեղոքության սկզբունքն ե յեղեւ վոր «Ալիանսի»
գոյության ընթացքում վճռական նշանակություն ե
ունեցել նրանց պահպանողականության հետադիմա-

կան և հականեղափոխական քաղաքականությունը հա-
ջողությամբ շարունակելու տեսակետից: «Ալիանսի»
յերկրորդ կոնվրեսը, վոր տեղի ունեցավ 1896 թվին
Փարիզում, նրա հիմնավորումից ուղիղ մի տարի անց,
վորոշում ընդունեց քաղաքական չեղոքության մասին,
վորտեղ առվում և. «Ալիանսը» չի զրադվաւմ վոչ քա-
ղաքական և վոչ ել կրոնական հարցերով: Կոռպերա-
ցիան ներկայանում և մի չեղոք ասպարեզ, վորտեղ
կարող են իրար հանդիպել և միասին գործել միան-
գամայն տարբեր քաղաքական հոսանքների պատկա-
նող և համոզմունք ունեցող մարդիկ: Այդ չեղոքու-
թյունն ամրացնելու համար, վորից կախված և կո-
ռպերատիվ շարժման միասնականությունը, բրոյր այն
անձինք և կաղմակերպությունները, վորոնք կընդուն-
վեն «Ալիանսի» անդամ, պետք և ընդունեն, վոր կո-
ռպերացիան հանդիսանում և ինքնանպատակ և չպետք
և զենք ծառայի այս կամ այն քաղաքական կուսակ-
ցության համար:

«Ալիանսի» պատմության ընթացքում, նրա կոնդ-
րեսներում ձախակողմյան տրամադրություններ յեղել
են, վորոնք արտահայտվել են ինպատ դասակար-
գային կովի. սակայն, այդ տրամադրությունները, լի-
նելով աննշան, վորեւ և ազդեցություն չեն գործել
«Ալիանսի» բեյակցիոն քաղաքականության վրա: Ընդ-
հակառակը. «Ալիանսի ղեկավարությունն այնքան եր
պահպանողական և հետադիմական, վոր «Կոպենհագե-
նի» 1910 թվականի սոցիալիստական կոնդրեսի վո-
րոշումն այն մասին, «վոր, յեթե կոռպերատիվ շար-
ժութիւն ինքնին յերբեք ի վիճակի չե ազատագրելու
բանվորներին, այնուամենայնիվ այդ շարժումը կա-

բող և իսկական զենք ծառայել բանվորին համար իր գտառակարգային կովի գործում, վորի նպատակն է իր ձևորը զցել քաղաքական իշխանությունը և հասարակայնացնել բոլոր արտադրական և փոխանակության միջոցները։ Նույնպես տապալվում է 1910 թ. Համբուրգում տեղի ունեցած «Ալիանսի» կոնգրեսում։ Զնայտ Կովենեադենի սոցիալիստական կոնգրեսի ունեցած բարգական խոշոր ազգեցությանը՝ Համբուրգի կոոպերատիվ ինսերնացիոնալի կոնգրեսի վրա, այնուամենայնիվ, պահպանողական թեզի ուժեղության հետևանքով, զեկազարությունը դարձյալ մեռմ և վերջինների ձեռքին, վորոնք շարունակում են բուրժուակային ծառայելու իրենց քաղաքանությումը։

Համաշխարհային պատերազմի նախորյակին Գլազու քո քաղաքում կայացած «Ալիանսի» Խ բդ կոնգրեսում նել ավելի վճռական և պարզ վորաշում և հանվում, — վոր կոոպերացիան չի կարող համարվել վճռ քաղաքական և վճռ ել գոստակարգային շարժում։ Հին սեֆորմիստ կոոպերատորների սիրոծ ձեն և, հիմնվել Ռոչգելյան ազնիվ պիոներների թողած ավտոգների վրա և համարել իրենց նրանց թողած գործի շարունակողները։ Մակայն, այդ տեսակետից ևս նրանք չեն կարող վճռ մի դեպքում համարվել նրանց հետեւողները։ Ռոչգելյան ազնիվ պիոներների գործը, վոր սկիզբն ե առնում 1844 թվին Անգլիայում, ունի միջողգային պատմական նշանակություն։ Այստեղ բանվոր դասակարգը, ձեռնարկելով կոոպերատիվ կազմակերպությունների, ինքն իր սեփական միջոցներով սկսեց կովել կապիտալիստական շահագործման դեմ, ցուցաբերելով իր սեփական դա-

սակարգային ուժը, վորակես պայքարի մի միջոց։ Այն
հավաստիացումները, թե քաղաքական չեղոքության
լողունզը նոչդելյան ազնիվ պիոներներից և մասեր,
չի համապատասխանում պատմական իրողությանը։
Ռոշդելյան պիոներների և վճռ մի աշխատանքի մեջ
չկա քաղաքական չեղոքության մասին վորեն բան։

«Ալիանսի» ռեֆորմիստ հականեղափոխական ղե-
կավարներն ամենայն իրավմամբ կարող են համարվել
Ռոշդելյան տկտիվ պիոներների մեծ գործի գավաճան-
ներ։

Վերջին հաշվով քաղաքական չեղոքության սկզբ-
բունքը հատկապես ուղղված եր քանիոր դասակարգի
հեղափոխական դառակարգային պայքարի դեմ։ Չեզո-
քությունը լավագույն միջոց եր կոռապերացիայի մեջ
ընդգրկված միլիոնավոր մասսաները չեղոքացնելու,
հեռու պահելու բուրժուազիայի դնմ ուղղված քաղա-
քական կավից։

III

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՑԵՎ „ԱԼԻԱՆՍԸ“

«Ալիանսը» իր գոյության ընթացքում բազմից ս
անգամ ազգերի խաղաղության մասին կոչեր և արել։
Նրա հիմնական ծրագրային խնդիրներից մեկը յեղել
ե պատերազմի դեմ պայքարելը։ Համաշխարհային պա-
տերազմի նախորյակին «Ալիանս» դարձել եր պացի-
ֆիստական քարոզների և գործունեյության մի կենտ-
րոն։ 1918 թվականին Գլազգոյին «Ալիանսի» կոնգրե-
սում դրված ե յեղել նաև պատերազմի դեմ պայքա-

բելու խնդիրը։ Այդ ժամանակ կոնգրեսի կողմից կազմակերպում են խաղաղ ցույցեր, վորտեղ Ալբերտ Թուման, յերկրորդ ինտերնացիոնալի սյուներից մեկը, կրակոտ ճառ և արտասանում պատերազմի դեմ։ Նա, իմիշխայլոց, առում եւ «Մեր ժամանակներում կոոպերատիվ շարժումն, համենայն դեպս, այնքան և մեծ և ուժեղ, վոր ի վիճակի կլինի հակառարված հասցնելու մի քանի պետությունների խելազար ցանկությանը, վորոնք կցանկանային աշխարհը պցելնոր պատերազմի դիրկը»։ Կույնանման յելյույթներ են ունենում նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ներկայացուցիչները, վորոնք խոստանում եյին թույլ չտալ և խանգարել իրենց պետություններին՝ իրազործելու իրենց անմիտ ցանկությունը՝ պատերազմին մասնակցելու գործում։ Այնուհետև «Ալիանսը» պատերազմի դեմ մանիֆեստ և հրատարակում, ինչպես այդ մանիֆեստը, այնպես ել տեղի ունեցող բոլոր ելույթները, ի հարկե, վոչ մի քաղաքական նշանակություն չեն ունենում, զրանք լոկ դատարկ պացիֆիսատկան փորձեր եյին, կատարյալ խարերայություն եր, վոր մասսաններին ավելորդ անդամ խարելու նպատակ եր հետապնդում։

Չի անցնում մի տարի յել այդ հավաստիացումներից ու կոչերից, յերբ սկսվում ե պատերազմը և «Ալիանսի» տարբեր յերկրների ղեկավարներն անցնում են իրենց պետությունների ազգային շահերի պաշտպանության կողմը և իրենց կոոպերատիվ կազմակերպությունների միջնորդ նպաստում, վոր պատերազմը հասնի իր հաղթական վախճանին։ Այս բոլորի մեջ ամենաբնորոշ և ուսանելի փաստն այն ե, վոր

պատերազմի դեմ բարձրագոչ հայտարարություններ անող «Ալիանսի» ականավոր լիդերները բուրժուազիային մատուցած իրենց ծառայությունների համար, հենց պատերազմի սկզբից ստանում են պատասխանառու զինվորական պաշտոններ:

Այսպես անվլիայի կոռպերատիվ շարժման դեկավար Մակսվիլը ազնվականի կոչում և ստանում զինվորական ինտենդանտավոյի մատուցած ուղարկար ծառայությունների համար, Ալբերտ Բոման Ֆրանսիական կարինետում գրավում ե զինվորական մինիստրի պաշտոնը, իսկ ականավոր պացիֆիստ սոցիալ-ռեմոկրատ Ավգուստ Մյուլլերն ուղարկում ե հարմար առիթից և դառնում ե Գերմանիայի զինվորական կարինետի անդամ:

Այսուհետև կոռպերացիան դառնում ե համաշխատ պատերազմի զլինավոր նեցուկներից մեկը: Ֆրանսիայում կոռպերատիվ կազմակերպություններն իրենց ձեռնարկությունները հարմարացնում են ռազմական նյութեր պատրաստելու համար: Դարձյալ Ֆրանսիայում այն ժամանակ 1200 կոռպերատիվներից 932 ը բացառապես զրադաշտ եյին ռազմական նյութերի մատակարարման գործով: Նույն պատկերն էր ներկայացնում իրենից նուև Գերմանիան, Անգլիան և այլ պատերազմող յերկրները: Առանց չափազանցության կարելիյե պնդել, վոր բուրժուական աշխարհում չկար մի կոռպերատիվ կազմակերպություն, վոր իմպերիալիստական պատերազմի գործիք չդառնար:

Ահավասիկ, այսպիսի վորպերգական վախճան ունենում «Ալիանս»-ի պատերազմի դեմ վարած «պայքարը»:

ԵՇԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՌՈԵՐԱՅԹԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐ- ԳԱՑՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Ուսուզիստ ոհմարմիստ կոռպերատորների խա-
զադ ճանապարհով, առանց դաստիարակային պայքարի,
սոցիալիզմին համեմու թեորիային հակադրվել և հե-
ղափողական դաստիարակային անողոք և անհաջո կռվի
տեսակետը։ Այդ նկատառումով ահա կոռպերացիան յեր-
բեք չի նայվել վորպես մի ինքնանպատակ կազմակեր-
պություն, անկախ բանվոր դաստիարակի կողմից կա-
պիտակիսատկան կարգերի դեմ ուղղած պայքարի
մյուս ձեերից։ Բանվոր դաստիարակի իսկական ազա-
տագրումը կախված է պրոլետարիատի դիկտատու-
րայի հաստատումից, կապիտալիստական իրավակառդի
խոպառ վերտցման ճանապարհով։

Կոռպերատիվ կազմակերպություններն, առանձ-
նապես սպառողական բանվորականը, վորպես պրոլե-
տարական մասսաներ ընդունելու շարժում, պիտք և բան-
վոր դաստիարակի հիմնական պայքարին ոժանդակող՝
նրա մի մասը կազմող մամենաներից մեկը հանդիսա-
նան։

Առաջին անգամ կ. Մարքսը, հակառակ ուսու-
ողիստ կոռպերատորների իլլուզիանելի, տալիս և դա-
ստիարակային պայքարի ճշմարիտ ուսմունքը և դրա
հետ միասին ընդգծում ե կոռպերացիայի դարգացման
ճիշտ ուղիները։

Մարքսն ընդունում է, վոր կոռպերացիան, վոր-
պես անտեսական կազմակերպչական մի սիստեմ, հա-
կառակ կապիտալիստական կարգերի, իր մեջ պարու-
նակում և կոլլեկտիվիստական հիմունքներ և հանդի-
սանում և ռհին ձեռքի մեջ առաջին ճեղքածքն ա-
ռաջացնող մի գործոն:

Սակայն, նա, մատնանշելով կոռպերացիայի այդ
կարևոր առանձնահատկությունը, անհրաժեշտ և հա-
մարում ընդգծել, վոր կոռպերացիան անկարող և կա-
պիտալիստական հասարակակարգի վերակազմությանն
անցնել, քանի քաղաքական գերիշխանությունը գըտ-
նվում և բուրժուազիայի ձեռքին:

Այսպիսով կոռպերացիայի անարգել դարձացման
և ազգային մասշտաբով ծավալման համար կարևոր
նախապայման և պրոլետարիատի դասակարգային,
քաղաքական կոիվը ընդգեմ տիրապետող դասակարգի:

Այս մասին Մարքսը 1869 թ. Ինտերնացիոնալի
ֆոնդի կոնգրեսի բանաձեկի մեջ ասում է. «Կոռպերա-
տիվ շարժումն, իր զարգացման ընթացքում ունենա-
լով թշուկ ոյին կերպուրանք, վոր տալիս են նրան իրենց
ուժերի վրա հիմնված աշխատող ստեղծագործիվ վարձու-
քանվարները, անուժ և, յերբեք չի կարող կապի
տալիստական հասարակարգը փոփոխության յենթար-
կել: Վորպեսդի ստեղծվի հասարակական արտադրու-
թյան ազտու և կոռպերատիվ աշխատանքի խոշոր ու
ներդաշնակ սիստեմ, պետք և փոփոխության յենթար-
կել հասարակական ընդհանուր պայմանները: Այդ
փոփոխությունները յերբեք ել տեղի չեն ունենա,
յեթե հասարակության կազմակերպված իշխանու-
թյունը, ուրիշ խոսքով՝ պետական իշխանությունը

կառիտալիստների և հողատերերի ձեռքից չանցնի
բանվորների ձեռքը»:

Յերկար ժամանակ Սոցիալիստական կուսակ-
ցությունը հիմնովականորեն կիրառում էր Մարքսյան
այդ անսակետը կոռպերատիվ շարժման նկատմամբ:

Այսպես, 1979 թ. Մարսելյան բանվորական
կոնգրեսը գտնում է, վոր «արտադրական և սպառ-
զական ընկերություններն, ունենալով հնարավորու-
թյուն բարելավելու միայն փոքրաթիվ արտոնյալ վի-
ճակում գանվող բանվորների վիճակը, չնեն կարող
նկատվել վորպես բավական արժեք ներկայացնող մի-
ջոց բանվոր դասակարգի աղատագրական գործում»:

Նույն միացն ավելի վորոշ ասում է 1992 թ. գեր-
մանական սոցիալ դեմոկրատական համագումարում
ընդունված վորոշումը: Ավելի ուշ, 1993 թվականին,
գերմանական սոց.-դեմոկրատական կուսակցության
ղեկավար Բերելը ուայխսատպում հայտարարում է, վոր
Սոցիալ դեմոկրատիան առանձնապես արժեք չի տալիս
այն սկսւաններին, վոր սպառողական կոռպերացիան
տալիս ե իր անդամներին»:

Այսպիսով Մարքսի անսակետը կոռպերատիվ
շարժման նկատմամբ տիրապետող դեր և կատարում
մինչև 20 դարի սկիզբները: Սակայն արևմտյան սո-
ցիալ դեմոկրատական և այլ սոցիալիստական կուսակ-
ցություններն իրենց վարած դասակարգային հեղա-
փոխական պայքարի քաղաքականությանը հետզետե-
ռալիս յեն խաղաղ, պարլամենտական և բարենորոգ-
չական ընթացք: Այդ ժամանակաշրջանում ե, վոր
կոռպերատիվ շարժման մեջ, ինչպես մենք վերեռում
տեսանք, ոեֆորմիստ պահպանողական աարբերն ավելի


Աս խորացնում են իրենց ազդեցությունը, կոռպերատիվ մտսաւական շարժումը դարձնելով բուրժվագիտի շահերին սպասարկող մի կազմակերպություն։ Այսուհետեւ բավական ժամանակ մոռացության են արվում հեղափոխական մարքսիզմի սկզբութները և այն փոխվում է յերկրորդ՝ զեղին ինտերնացիոնալի դավաճանական քաղաքականության, վորի պատուղներն այսոր քաղում և միջազգային բանվորությունը։

Այդ բոլորից հետո, կենսական անհրաժեշտություն եներկայանում ցույց տալ իսկական Մարքսին և վճռուկան ձևակերպությամբ կարել մարքսիզմի հետագա խեղաթյուրութեարի ճանապարհը։

Այդ ձևակերպումը տալիս է լինինիզմը, իբրև հեղափոխական մասսաների ակտիվության ուսմունք։

Հենինը վորպես հեղափոխական մարքսիզմի հետևողական շարունակողը, կոռպերատիվ քաղաքականության խնդիրներին մոտենալիս յենում է ամենից առաջ բանվոր դասակարգի հեղափոխական դասակարգային պայքարի շահերից։ Սպառողական կոռպերացիան այդ շրջանում ընդգրկել եր միջիունավոր մասսաներ, վորոնց զեկավարությունն ամբողջությամբ գըտնվում եր ռեֆորմիստական-պահպանողական կոռպերատորների ձեռքին։ Բնական է վոր Հենինը, իր հանձնարեզ իրատեսությամբ, չեր կարող նման մասսայական շարժման նկատմամբ լինել լուր հանդիսատեսի դերում։

Հենինը ամեն շարժման նկատմամբ, վորտեղ սել է պրոլետարական մասսաների մասսնակցությունը, միշտ յերեան և հանել ծայրահեղ շահագրգռություն,



ոգատագործելով այն իր հիմնական նպատակների՝ պրո-
ցեսարական զիկտատուրայի և սոցիալիստական հե-
ղափոխության համար:

Այդ ահսակեաից ընկ. Լենինի ղեկավարությամբ
բալշեիկյան ֆրակցիայի մասնակցությունը կոպեն-
հագինի սոցիալիստական կոնգրեսին հեղափոխական
կոռուպերմցիայի շարժման ահսակեաից ունի պատմա-
կան նշանակություն:

1910 թվականին Կոստենհագենի սոցիալիստա-
կան միջազգային կոնգրեսում Լենինը մեծ նշանակու-
թյուն առաջ կոռուպերացիայի հարցին, անձամբ մաս-
նակցում և կոնգրեսի կոռուպերատիվ հանձնաժողովի
աշխատանքներին և համագումարում պայքար մղում
համաձայնողական, մանր-բուրժուական կուսակցու-
թյունների ղեմ, վորոնք կոռուպերացիան ընդունում
են պրոլետարիատի դասակարգային կովից անկախ
մի շարժում: Նա համաձայն չլինելով կոռուպերացիայի
մտսին առաջարկված բանաձների հետ, ոռւսական
պատգամավորության անունից առաջարկում է իր ա-
ռանձին բանաձնելը, վորն ամբողջությամբ առաջ հնք
բերում:

«Կոնգրեսը դանում է».

1) Վոր պրոլետարական սպառողական կոռուպե-
րատիվները բարեկավում են բանվոր դասակարգի ղրու-
թյունը նբանով, վոր ամեն անսակի առետրական միջ-
նորդների շահագործումը մեզմացնում են, վոր ազդում
են աշխատանքի պայմանների վրա գրական իմաստով
և լավացնում են իրենց աշխատակիցների անտեսական
դրությունը:

2) Վոր այդ ընկերությունները կարող են մեծ

նշանակություն ստանալ պրոլետարիատի տնտեսական և քաղաքական մասսայական պայքարի համար, պաշտպանելով բանվորների դորժազուլների, լոկատուտների, քաղաքական հայածանքների ժամանակ:

Մյուս կողմից կոնգրեսը նկատում է՝

1) Վոր այն պայմանների լավացումը, վոր կառող ե սպառողական կոռպերատիվների միջոցով ստացվել, կարող են լինել չափազանց աննշան, յեթե բուրժուազիայի ձեռքում յեղած արտադրական միջոցները եքսպրոպրաթիայի չենթարկվեն, առանց վորի դժվար ե իրականացումը:

2) Վոր սպառողական ընկերությունները չեն ներկայանում կապիտալի դիմ պայքարող տնմիջական կազմակերպություններ, վոր կարող ե ստեղծել իլլյուզիա այն մտսին, թե այդ կազմակերպությունները հանդիսանում են մի միջոց, վորոնց ուղնությամբ հնարավոր ե լուծել սոցիալական հարցն, առանց դասկարգային կովի և բուրժվազիայի եքսպրոպրաթիայի հոնդրեսը կոչ ե անում բոլոր յերկրների բանվորներին.

1) Մտնել սպառողական կոռպերատիվների շարքերը և ամեն կերպ նպաստել նըտնց զարդացմանը, պահպանելով այդ կազմակերպությունների դեմոկրատական ընույթը:

2) Սպառողական կոռպերատիվներում, անընդհատ սոցիալիստական պրոպագանդ մղելու միջոցով, նպաստել բանվորական շարքերի մեջ դասակարգային կովի և սոցիալիզմի գաղափարների տարածմանը:

3) Դրա հետ միասին ձգտել վորպեսզի, վորքան կարելի յե, ավելի լիակատար մերձեցում առաջ դաբանվորական շարժման բոլոր ձևերի մեջ:

Կոնգրեսը մատնանշում և նաև այն, վոր արտա-
դրողական ընկերությունները կարող են բանվոր գա-
սակարգի պայքարում նշանակություն ունենալ, յեթե
դրանք լինեն սպառզական ընկերությունների ան-
բաժանման մասերը»:

Այսպիսով մենք ահսնում ենք, վոր Լենինը կա-
պիտալիստական իրավակարգության կոռպերացիան ըն-
դունել և զորպես պրոլետարական հեղափոխությանն
ուժանդակող մի միջոց, Նա անհրաժեշտ է համարել
զգուշացնել բանվորական մասսաներին, վոր սպառ-
զական կոռպերացիայի տված առորյա ոգուաները վոչ
մի զեղքում ի վիճակի չեն մազաշափ անդամ լուծե-
լու դասակարգային պայքարի խնդիրները, վոր ուսու-
պիսա ուժիորմիսա կոռպերատորների այն քարոզները,
թե կոռպերացիայի միջոցով հնարավոր և սոցիալիզմի
իրականացնել առանց դասակարգային կովի ոգնու-
թյան, կատարյալ խարերայություն և Բացի այդ, ըն-
կեր Լենինը միանգամայն կարեռ և գանում, վոր կո-
ռպերացիան անուշադրության չմատնվի. այդ գերա-
զանցորեն մասսայական կազմակերպությունները
պետք ե ծառայեն բանվոր դասակարգի մյուս կազ-
մակերպությունների հետ միասին՝ սոցիալիզմի մեծ
դորձին։ Դրա համար անհրաժեշտ է դորձնական և
առորյա աշխատանքների պրոպագանդի միջոցով կո-
ռպերատիվ կազմակերպությունները դուրս բերել ու-
ժորմիստների ազգեցությունից։

Հոկտեմբերյան հեղափոխությունը 1917 թվին
հեղափոխական կոռպերացիայի հետագա զարգացման
համար ստեղծում և մի նոր պատմական դարաշրջան։
Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո քաղաքական

զերիշխանությունն յերկրագնդի 1/6 մասում անցնում
եւ պրոլետարիատի ձեռքը: Խորհրդային Միության տր-
ատադրական փոխարարելությունները հիմնականապես
փոփոխության յեն յենթարկվում: Ստեղծվում են սո-
ցիալիստական շինտարարության համար լայն պայման-
ներ ու հնարավորություններ:

Ճիշտ այս պայմաններին եւ վերաբերում Մարքսի
կոմունիստական մանիֆեստում հայտնած այն միտքը,
թե «վորպեսզի կոռպերացիան աշխատավոր մասսաների
աղատագրողը դառնա, անհրաժեշտ է, վոր նա իր սի-
տեմով ընդգրկի իր մեջ վողջ հասարակությանը և
հետեւապես ուղարկի պետական ոժանդակությունից»:

Յեզ այսպես, պրոլետարական դիկտատուրայի
պայմաններում կոռպերացիան Լենինի գնահատության
մեջ ստանում եւ միանդամայն տարբեր բովանդակու-
թյունն. նա մեր պայմաններում ձեռք եւ բերում
«հսկայական, անծայրածիր» նշանակություն: Լե-
նինն ասում ե. «Այժմ մենք իրավացի յենք ասելու,
թե կոռպերացիայի հասարակ անունը մեզ համար հա-
մազոր եւ սոցիալիզմի անման և սրա հետ միասին
մենք ստիպված ենք ճանաչել սոցիալիզմի մասին մեր
ունեցած տեսակետի արմատական փոփոխությունը:
Այդ արժատական փոփոխությունը նրանումն ե, վոր
մենք սկզբում ծանրության կենարոնը զնում եյինք,
և պետք ե զնեյինք քաղաքական կռվի մեջ. Իսկ այ-
ժըմ ծանրության կենարոնը փոխվում ե այն աստի-
նանի, վոր փոխադրվում ե խաղաղ կազմակերպչական
և կուտարական աշխատանքի բնագավառը»:

Լենինի կոռպերատիվ պլանն այնուհետև դառ-
նում ե մի ուղեցույց հեղափոխական կոռպերացիայի

գարգացման համար։ Խորհրդային Միության համար
Լենինի կոռպերատիվ պլանը գառնում և սոցիալիս-
տական շինարարության հղորագույն գործոն։ Խոր-
հրդային կոռպերացիան իրաղես դառնում և մի հոյա-
կապ կազմակերպություն, վորի նշանակությունը և
ազգեցությունն անցնում և կարմիր գծից զուրս և
ստանում միջազգային նշանակություն, դառնալով
հեղափոխական կոռպերացիայի կազմակերպողն ու ղե-
կավարը։

¶

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՌԵՐՍՑԻԱՆ ՅԵՎ „ԱՌԻԱՆՍԸ“

Հոկանմբերյան հեղափոխությունը և պրոլետա-
րական գիկատառուրայի հաստատումը Խորհրդային
Միության մեջ խոր ճեղքվածներ առաջացրեց կապի-
տալիստական իրավակարգում։ Մյուս կողմից ել հա-
մաշխարհային պատերազմի քայլայիչ հետևանքներից
հետո բուրժուատկան աշխարհը կանգնած եր սոցիալիս-
տական մեծ վատնդի առաջ։ Պրոլետարիատի և բուրժ-
ուազիայի մեջ սկսված քաղաքաց. կոիվը խորհրդային
սահմաններից զուրս և գալիս և ծավալվում բուրժ-
ուական յերկրներում։ Տեղի յե ունենում պրոլետար-
կան լայն մասսանների հեղափոխականացման լուրջ
պրոցեսը։

Կոռպերատիվ ինտերնացիոնալը, վոր համաշխար-
հային պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում ան-
գործության եր մատնված և քայլայման վիճակին եր
հասած, քաղաքացիական կոիվների ահեղ բաղխում-
ների պայմաններում կենդանություն և ստանում և,

միացած միջազգային բուրժուազիայի հետ, սրբազն պատերազմ և հայտարարում բոլշևիզմի դեմ, մտանազարակին՝ խորհրդային կոռպերացիայի դեմ:

Կոռպերատիվ ինտերնացիոնալ «Ալիանսը» մնում է իր ավանդներին հավատարիմ: Հակառակ մարքսիստական ինտերնացիոնալի դասակարգային անողոք պայքարի և դասակարգային կոիմլերի անողոք սկըզբունքի, նա շարունակում է պայքարը հանուն դասակարգերի համերաշխության և, բնական և, Սոսկվայում վերածնված մարքսիստական ինտերնացիոնալը պետք է նորից կինդանություն տար «Ալիանսի» հետագիմական վողուն:

Այս պայքարում կարեոր տեղ են գրավում Թուստանից վտարված Ցենտրոյուզի նախկին վարչության անդամները և «Եին» կոռպերատորները (վերջերում դրանց միանում են նաև Վրաստանից և Հայաստանից փախած վտարանդիները):

Նրանք չտեսնված պրովակացիա յեն բարձրացնում Թորհրդային իշխանության շուրջը: Նրանք ստեղծում են հասարակական կարծիք, վոր Թորհրդային իշխանության քաղաքականության հետևանքով կոռպերացիան կործանվում է, վոր կոռպերատիվ կազմակերպությունները վճէ մի հնարավորություն չունեն իրենց նորմալ գործունեյությունը շարունակելու և այլն և այլն:

Այդ վտարանդիները վոչ մի միջոց չեն խնայում Թորհրդային իշխանության դեմ հականեղափոխություն կազմակերպելու գործում: Ցեվրոպայում այդ ժամանակ նրանց տրամադրության տակ կային հին Թուստանից մնացած մի շարք կազմակերպություն-

ներ, ինչպես Յենտրոսոյուղի բյուրսները կոնդոնում, Բերլինում, Պոլսում, Ստոքոլմում և Փարիզում, դնման և վաճառականանման գրասենյակը՝ Նյու Յորքում, իսկ Լոնդոնում՝ Փողովրդական բանկը, վորոնք առանց յութական միջնորդ եյին հայթայթում նրանց հականեղափական դործունեյթյան համար։ Նրանք բազմաթիվ նախագծեր եյին ներկայացնում Անտանտյի կառավարություններին պրոլետարական դիկտատուրայի խորակում արտգացնելու համար։ Մինչև իսկ նրանք ներկայացրին անտահատկան ինտերվենցիայի մի մանրամասն պլան, վոր պետք եւ պաշտպոնվեր կապիտալիստական օրենությունների ռազմական ինտերվենցիայով։

Ծենտրոսոյուղի հին վարչության անդամները մինչև 1921 թվականը համարվում եյին «Ալիանսում» որինական ներկայացուցիչները Ռուսաստանի կոռպերատիվ շարժման, «Ալիանսի» անդամներ եյին նաև Վրաստանի և Հայաստանի սպառողակ. կոռպերատիվն. միությունները՝ «Ճեկավշիրին» և «Հայկոռոպը», վորոնք նույնպես ունեյին իրենց հին ներկայացուցիչները, Խորհրդային կոռպերացիայի բազմաթիվ բողոքները՝ վոր այդ մարդիկ անկոչ ներկայացուցիչներ են և չեն կարող համարվել իրավազոր, ուշադրության չեյին առնվում։ Նրանք շարունակում եյին «Ալիանսի» շարքերում իրենց հականեղափական և խլուրդային աշխատանքը մերժեմ։ Ժնեվում, 1920 թվականին, նրանց հաջողվում ե «Ալիանսի» կենտրոնական կոմիտեյում անցկացնել մի վորոշում, վորտեղ ասվում ե. «Ալիանսի» կենտրոնական կոմիտեն բողոքում ե Ռուսաստանի կոռպերատիվ կազմակերպություններն անկախու-

թյունից և լիակատար ավտոնոմիայից զրկելու դեմ:
Բողոքում ե, զոր Խորհրդային իշխանությունը խառն-
գում և խանդաբում կոռպերատիվ շարժման զար-
գացմանը: Կենտրոնական Կոմիտեն ճանաչում է իրեն
որինական ներկայացուցիչներ նրանց, ովքեր ստացիլ
են իրենց մանդատները ազատ զեմոկրատական կո-
ռպերատիվ կազմակերպություններից::

Ռուսաստանի հակահեղափոխական կոռպերատոր-
ները կոռպերացիում իրենց ունեցած ազդեցությունը
վորձեցին ոգտագործել յերկրի ներսում հակահեղա-
փոխություն առաջացնելու համար: Նրանք պահան-
ջում եյին Խորհրդային իշխանությունից կոռպերա-
ցիայի համար անկախ և ավտոնոմ իրավունքները վոր-
պեսզի նրանց հեշտությամբ հաջողվի բանվորական
զիկատուրայի դեմ հակադրելու իրենց ուժը: Սակայն,
յերկրի ներսում վերջնականապես պարտվելուց հետո,
այս անդամ վորձում են Խորհրդային իշխանության
դեմ ոգտագործել միջազգային բուրժուազիայի ուժը
և «Ալիանսի» ազդեցությունը:

Նույնպիսի աղմուկ և պրովակացիա բարձրացրին
Վրաստանից վտարված մենշեվիկ կոռպերատորները:
Նրանք բոլոր միջոցների դիմեցին՝ համոզելու յեվրո-
պական հասարակական կարծիքը, վոր Յենտրոսոյուղը
Զեկայի ոգնությամբ բռնի կերպով բռնագրավիլ և
Վրաստանի կոռպերատիվների միությունը՝ Յեկավշի-
րին, վոր Հնորհիվ Խորհրդային իշխանության հակա-
կոռպերատիվ քաղաքականության, Վրաստանի կոռպե-
րատիվ շարժումը քայլայման և հասել «Ալիանսը»
համարյա ամբողջ յերկու տարի շաբունակ Վրաստանի
կոռպերացիայի խնդրով և զբաղվում: Ի վերջո, 1922

թվին, վորովեսզի Վրաստանում կատարվող դեպքերը ստուգվեն, «Ալիանսը» վորոշում և հատուկ պատգամագորություն ուղարկել Մեկնում ևն Թիֆլիս Վիկտոր Մերգին և Գուգոշվիլին՝ նոխկին Վրաստանի ներկայացուցիչն «Ալիանսում»։ Այդ այն Գուգոշվիլին եւ վոր Վրաստանի կոռալերացիայի ոգնության համար Յեղրպապայում ստանում եր մեծ դումտրներ և ծախսում եր անձնական կարիքների համար։

Պատգամավորությունը մեկնում և այնպիսի ժամանակ, յերբ Ո ինտերնացիոնալը հակայտական կամպանիա յեր ատնում Խորհրդային միության դեմ, և այդ պատգամավորությունը մեկնում եր Վրաստան Հատուկ հանձնարարություններով՝ Վրաստանում կատարվող գեղքերը տենդենցիով կհրպավ Յեղրպապային ներկայացնելու համար։ Այգեստ էլ լինում եւ,

Սակայն, 1923 թ., յերբ Մոսկվա յեն մեկնում «Ալիանսի» դլխավոր քարառուզար Մեյը և ականավոր կռուպերատոր Շորլ Փիդը և ունենում են հատուկ տեսակցություն Ցիկավշիրիի, Ազրիտիֆակի և Հայկուպեներկայացուցիչների հետ, իրական փաստերի և գուկումնաների հետ ծանոթանալուց հետո նոր միայն միանգամայն պարզվում և յերկու տարբա մեջ ահղունեցող աղմուկի ամբողջ պրովակացիոն ընույթը*):

Ժամանակները փոխվում են։ Խորհրդային իշխանությունը մնում և անսասան։ Ինտերվենցիայի և բլոկադայի բարը փորձերը ջախջախվում են, հանդիպելով խորհրդային Միության և միջազդային պրոլետարիատի յերկաթյա դիմադրությանը։ Այնուհետեւ իմ-

*) Այդ խորհրդակցությանը մասնակցում եր Հայտսանից առղերիս գըղը։

պերիալիստական պետությունները, նկատի ունենալով իրենց տնտեսական և քաղաքական ծանր դրությունը, ինչպես Ազգային Լիգան, այնպես ել Անգլիան, 1921 թվականին վորոշում են խորհրդային իշխանությունը դեֆակտո մանաշել և սկսել առեարական փոխարաբերություններ։

«Ալիանսը» նույնպես իր քաղաքականությունը փոխում դեպի խորհրդային իշխանությունը, մասնավորապես՝ դեպի խորհրդային կոռպերացիան։ Յեվայսպես, 1921 թ. Բաղել քաղաքում «Ալիանսի» կոնդրեսը 733 ձայնով ընդդեմ 464-ի, վորապես «Ալիանսի» իրավասու անդամներ, ընդունում է խորհրդային կոռպերացիայի ներկայացուցիչներին։ Յեվ «Ալիանսի» Կենտրոնական կոմիտեյի անդամներ, Վիլգելմի և Տուոմանցի փոխարեն, անցնում են ընկ. ընկ. Կրասինը և Պոլովցևան (կին)։ Նույն բախտին և արժանանում նաև Վըստանի մենշևիկ Գուգոշվիլին և Հայտստանի ներկայացուցիչը։

Այս ըոլորը ջարդ ու փշուր և անում հականեղափոխական վարանդիների ըոլոր սպասելիքները, վորոնց այլևս անելիք չի մնում, բայց յեթե խորհրդային կոռպերացիայի հասցեյին խղճուկ ու վողորմելի վայրահաջություններ անել։

Կոռպերատիվ ինտերնացիոնալի աշխատանքների մեջ խորհրդային կոռպերացիայի այդ առաջին հաղթանակը բավականին շոշափելի հնարավորություններ ստեղծեց հեղափոխական կոռպերացիայի հետապա աշխատանքները ծավալելու և աղղեցությունն ուժեղացնելու համար։

Այդ տեսակետից խորհրդային կոռպերացիայի «Ալ-

իանսում» տարած՝ աշխատանքներն ունեն պատմական նշանակություն։ Նա վճռողական ազդեցություն և ունեցել միջազգային կոռուպհերացվայիր քաղաքականության վրա։ «Ալիանսի» կազմակերպությունների և կոնդրեսների միջոցով հնարավոր և գարձել հեղափոխական կոռուպհերացիայի բոլոր հիմնական լոգունդները միլիոնավոր կոռուպհերացված մասսաների մեջ հասարակայնացնելու և տարածելու համար։

Վարժնք են այն հիմնական խնդիրները, վոր խորհրդային կոռուպհերացիան՝ մեծ համառությամբ և պայքարի զնով՝ հարուցել և կոռուպհերատիվ ինտերնացիոնալի տռաջ և այդպիսով զարձել կազմակերպչական կենտրոնը՝ միջազգային հեղափոխական կոռուպհերացիվ շարժման։

1. Քաղաքական չեզոքությունը

Կոռուպհերատիվ ինտերնացիոնալի վերաբերմամբ մենք արդեն տեսանք, թե քաղաքական չեզոքության լոգունզը վորքան մեծ ծառայություններ և մատուցել ուժորմիտ կոռուպհերատորներին՝ աշխատավորական մասսաներին գասակարգային պայքարից հռուպահելու համար։ Այժմ հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և Յեվրոպայում դասակարգային պայքարի սրման պայմաններում, շատ դժվար կլիներ քաղաքական չեզոքության լոգունզն ոգտագործել մասսաներին խարելու համար։

«Ալիանսի» գլխավոր քարտուղար Մելք Ստոքոլմի համագումարին 1927 թ. ներկայացրած իր զեկուցման մեջ գանգատվում է, ովոր այս վերջին վեց

տարիներն ամեն անդամ հարց և բարձրացվում՝ թե
ինչումն և կայանալու «Ալիանսի» քաղաքական չեղո-
քությունը։ Մինչև Բազելի կոնգրեսը (1921 թ.) չեղո-
քության սկզբունքը պարզ եր բոլորի համար և նրան
այսպես կամ այնպիս հետեւմ եյին։ Բազելի կոնգրե-
սից հետո «Ալիանսի» գիլիսոփայության և հոգեբա-
նության մեջ մտել են ինչ վոր նոր տարրեր, վորոնք
չեղոքության ձեակերպման հարցում համարյա միշտ
տարածայնություն են առաջ բերում։ Այս մեղադրանքն,
ի հարկե, վերաբերում ե խորհրդային կոռպերա-
ցիային։ Խակապես Խորհրդային կոռպերացիայի
ներկայացուցիչները՝ «Ալիանսի» անդամ լինե-
լու մոմենտից սկսած վոչ մի առիթ չեն թողել
քաղաքական խնդիրներ դնելու «Ալիանսի» թե կենտ-
րոնական և գործադիր կոմիտեների առաջ և թե բոլոր
կոնգրեսներում, պահանջելով այս կամ այն լուծումը։
Այսպես՝ Գինտի կոնգրեսում կոմունիստական ֆրակ-
ցիան պահանջեց Բորենաժի լիոնագործների ընդհա-
նուր գործադուլին ուղարկել համերաշխության հեռա-
գիր և միջոցներ ձեռք առնել նրանց նյութական ո-
ժանդակություն հասցնելու համար, նույնպես խնդիր
հարուցից 1926 թ. Համբուրգում տեղի ունեցող
կոնգրեսում Անգլիական ածխահատների հերոսական
գործադուլին ոգնելու մասին։ Այնուհետև մայիս մեկ-
յան տոներին և քաղաքական այս կամ այն ցույցերին
մասնակցելու խնդիրներ և նման քաղաքական ընոյթ
կըսող հարցեր շարունակ առաջ եյին բերում մեծ դիս-
կուսիա և պայքար, վոր վերջին հաշվով, խորհրդային
կոռպերացիայի համար ծառայում եր պրոպագանդի և
Յեվրոպայի կոռպերացված մասսաներին կազմակեր-

պերու չափագույն միջոց։ Այս հանդամանքը չտփաղանց
 մեծ անհանգստություն և զղայնություն եր առաջ բե-
 րում «Ալիքանսի» սեփորմիստ ղեկավարների մեջ, վո-
 րոնք, մերթ անգլիային ներկայացուցիչների անունից,
 մերթ՝ գերմանական, պահանջում եյին վերջ տալ կո-
 մունիստական պրոպագանդային, վերջ տալ «Ալիքանսի»
 քաղաքական չնզոքության սրբազն և տրաղիցիոն
 սկզբունքի խախտման փորձերին։ Մինչև իսկ պահան-
 ջում եյին խորհրդային ներկայացուցիչներին հեռացնել
 «Ալիքանսի» անգումությունից։ Այս բոլորը նրանց չեր
 հաջողվում, վորովինետե սեփորմիստների քաղաքական
 և սկզբունքային դիրքերը չտփաղանց խախուտ եյին
 և սեփական շարքերի մեջ առաջ եր յեկել տրամա-
 գրությունների անվճռուղականություն և զփոթություն։

2. ԳրաՅմիուրյունների ներս սերտ կապ

Գրոլեստարիատի դասակարգային պայքարի հա-
 ջողության տեսակետից՝ մեծ նշանակություն և ձեռք
 բերում պրոֆմիությունների և կոոպերատիվ շարժման
 մեջ համերաշխ գործնեյությունը և նրանց սերտ կապը։
 Դասակարգային պայքարի սրման պայմաններում և
 կոմունիստական շարժման որեց որ ծավալվող վտանգը
 գիմագրավելու համար լի ինտերնացիոնալի և Ամստեր-
 դամի պրոֆեսիոնալ ինտերնացիոնալի ղեկավարները
 փորձեր են անում ոգտագործել մեր դեմ նաև կոոպե-
 րատիվ ինտերնացիոնալի ուժերը։ Այդ նպատակով
 1921 թ. «Անսանսի» և Ամստերդամի ինտերնացիոնալի
 կողմից սաեղծվում ե մի հանձնաժողով՝ ընդհանուր
 հարցերի շուրջը համաձայնություն մշտելու համար։

Խորհրդային կոռուպերացիայի ներկայացուցիչները, Հառարկելով «Ալիանսի» այդ քայլի դիմ, իրենց կողմից առաջարկում են, վորապեսզի կոռուպերատիվ և բանվորական շարժման մյուս ձևերի հետ լիակատար միասնականություն ստեղծվի, նաև համաձայնության մեջ մասնել Մոսկվայի պրոֆինտերնի հետ։ Այս հարցն այնուհետև «Ալիանսի» համար դառնում է մի մեծ քաղաքական խնդիր, վոր առաջ ե բերում հսկայական պայքար։ «Ալրանսի» գլխավոր քարտուղար Մեյը այդ մասին գրում ե։ «Ալիանսի» և Ամստերդամի ինտերնացիոնալների միջև համաձայնություն՝ կայացնելու խնդիրը հաջողությամբ առաջ եր գնում։ Սակայն ինչպես ասում են՝ արդեն ցյուղի կարասի մեջ մուկն եր ընկել», —պահանջ է դրվում համաձայնության գալ նաև Մոսկվայի պրոֆինտերնի հետ։

1926 թ. «Ալիանսի» Գինութիւն կոնդրեսում հաստատում են Ամստերդամի հետ համաձայնություն ստեղծելու խնդիրը։ Խորհրդային պատգամավորության առաջարկը՝ Մոսկվայի պրոֆինտերնին և ընդունել, մերժում են 179 ձայնով ընդդիմ 124-ի։ Սակայն դրանից հետո, և մինչև այժմ ել, այդ խնդիրը բաղմիցս անգամ դրվում ե և լուծում չի ստանում։ Շնորհիվ այդ պայքարի, մինչև որս «Ալիանսի» և Ամստերդամի միջև կայացած այդ համաձայնությունը չի ստանում գործնական նշանակություն։ Պետք է արձանագրել, վոր պրոֆմիությունների հետ սերտ կապ հաստատելու խնդիրը դաշտավմբ լավագույն միջոց՝ պրոլետարական լայն մասսաների մեջ բանվորական շարժման միասնական ճակատ

կտղմելու լոգունդի խորացման ողափն, և մեծ չափով
նպաստեց հեղափոխական կռոպերացիայի ազդեցու-
թյան ծավալմանը:

3. Պայքար պատերազմի դեմ

Խորհրդային կռոպերացիայի ամենամարտական
լոգունդներից մեկը հանդիսանաւմ ե պատերազմի դեմ
պայքարելը։ Մենք արդեն տեսանք, թե «Ալիանսը»
պատերազմի «գեմ» ինչպիսի դավաճանական քաղա-
քականություն տարագ պատերազմի ընթացքում, ինչ-
պիսի բազում ծառայություններ մտառւցեց։ Խորհր-
դային ներկայացուցիչներից մեկը «Ալիանսի» Գննութի
կոնդրեսում պատերազմի վաճանգի մասին մի կրակու-
ճառ և արտասանում և կոչ անում վողջ աշխարհի
բանվորներին՝ նոր պատերազմի դեպքում իրենց զնն-
քերն ուղղել բուրժվազիայի դեմ և սկսել անխնա զա-
սակարգային պայքար։ Այս ելույթն այնքան և սար-
սափեցնում «Ալիանսի» ոեֆորմիստ հականեղափոխա-
կան զեկավարներին, վոր զերման ական կռոպերացիայի
զեկավար Կառլֆմանը առաջարկում ե այդ ճառը չար-
ձանագրել և այն գրագել։ Այդպես ել արվում ե։ Այ-
նուհետեւ խորհրդային կռոպերացիայի ներկայացու-
ցիչները 1924 թվին, Ֆրանկֆուրտում առաջարկում
են մի հատուկ հանձնաժողով ընտրել նոր պատերազ-
մի դեմ պայքարելու գործնական առաջարկներ մշա-
կելու համար։ Մի խոսքով խորհրդային ներկայացուց-
չությունը վոչ մի առիթ քաց չի թողնում պատերազմի
վաճանգի դեմ այս կամ այն առաջարկներն ու յելույթն
անելու համար։ Սակայն, «Ալիանսի» զեկավարները

վհչ միայն ընթացք չեն տալիս այդ բոլոր առաջարկ-ներին, այլև նրանք իրենց յելույթներում մտանա-նշում են կոռակերացիայի կատարած մեծ ոգնությունը պատերազմին։ Շարլ Ֆիդը ասում է. «Ի՞նչ տվեց պա-տերազմը կոռակերացիային։ Նա բերեց նրան շատ ու-բաներ։ Կարելի յէ մինչև իսկ ասել, վոր կոռակերատիվ շարժումը միակն եր, վոր ամենից ավելի շատ շահեց պատերազմից»։

Նոր պատերազմի վտանը քանի գնում ավելի յե-սրվաւմ Խորհրդային ներկայացուցիչները «Ալիխանսում» այսոր ել պատերազմի դեմ պայքարի խնդիրը դարձ-րել են իրենց ամենակենսական և հրամայողական և ար-ցերից մեկը։ 1930 թ. Վեննայում գումարվելիք «Ալի-անսի» կոնգրեսում խորհրդային կոռակերացիայի ներ-կայացուցիչնորը պատերազմի դեմ պայքարելու խըն-դիրը պահանջում են դարձնել որակարգի զբաղման առարկաներից մեկը։ Պատերս դմի վտանգի դեմ պայ-քարելու խնդրում խորհրդային կոռակերացիայի կա-տարած տշխատանքների նշանակությունը քիչ չե Այդ-աշխատանքն այսուհետեւ ել ավելի յե խորանալու և ծավալվելու։ Համենայն դեպք, պատերազմի դեմ պայ-քարելու լոգունդը հեղափոխական կոռակերատիվ շարժ-ման համար մնում և ամենամարտական լոգուգներից մեկը։

4. Պայքար ֆաշիզմի դեմ

Պըլետարական հեղափոխության և դասակար-դային պայքարի զարգացման և ուժեղացման զուգա-հեռ զարգանում և ֆաշիզմը, վոր հանդիսանում և մի-

ջազդային բուրժվազիայի ավագակային ջոկատները, նրա ռազմական ուժը՝ հեղափոխությունը ճնշելու համար։ Բանվոր դասակարգի բոլոր հեղափոխական կազմակերպությունները Փաշիստական կազմակերպությունների կողմից յինթարկվում են բարբարօսական հարձակումների և համեմում կազմակերպութական աստիճանի։ Նույն վիճակին են արժանանում նաև այս կամ այն հեղափոխական արամադրությունը յերեան հանող կոռպերատիվ կազմակերպությունները։ Այս աեսակետից առաջնությունը պետք է տալ Խառլայի Փաշիստական պետությանը։ Բառլիայում կոռպերատիվ կազմակերպությունները յինթարկվում են Փաշիստական ավագակային հարձակման, նրանց զույքը դրավիլում ե, կոռպերատորները յինթարկվում են զբնութեամբության և բանարկության։ Մի խոսքով, սկսված ե մի խելազար հալածանք, վորն իտալական կոռպերատիվ շարժումը հասցնում է կատարյալ կործանման դուրը։

Բուլղարիայում արյունաբրու Յանկովյան կառավարության ձեռքով բոլորովին հիմնահատակ ե արքում ու հրդեհվում սեփական շենքը, գրտվվում ե սաացվածքը և սպանվում է Ասվարաժգենիա» բանվորական կոռպերատիվի գործիչները, վորի զեկավարությունն ամբողջապես դանվում եր կոմունիստների ձերքին։ Նույնանման հալածանք տեղի յե ունենում Վեհնայում և այլ յերկրներում։ Կոռպերատիվ շարժման նման չաենված հալածանքի դեմ, բնականորեն, պետք ե սպասել կոռպերատիվ ինտերնացիոնալի կողմից վճռողական միջոցների գործադրում, միջազգային մասշտարով բաղոքների կազմակերպում և այլն և այլն։

Սակայն «Ալիանսի» «պայքարը չի անցնում մի քանի
միաժիտ և վոչինչ չասող բանաձև բողոքներից այն
կողմէ: Թաշիդմի գեմ պայքարելու դործում «Ալիանսի»
քաղաքական չեղոքության լողունզի վնասակարու-
թյունը, նրա հականեղափախական բնույթը ամենից
պարզ և վճռողական կերպով յերևան յեկավ: «Ալիան-
սը» 1923 թ. բողոքի դիմում և անում Մուսոլինին,
սակայն այդ բողոքը վորե և հետեանք չի ունենում:
Ընդհակառակը Գինտ քաղաքում տեղի ունեցող «Ալ-
իանսի» կոնգրեսը համբերությամբ տանում և Մուսո-
լինի հայտնի Փաշիստների ներկայությունը, վորոնք,
վորպես լրտեսներ, յեկել եյին կոնգրեսում Փաշիստ-
ների գեմ հնարավոր յելույթներ կանխելու համար.
1925թ. Ստոկհոլմի կոնցընսինախորյակին, յերբ պարզ-
վում և, վոր Խտալիայում կոռպերացիայի դրությունն
ել ավելի վատանում և, «Ալիանսի» կողմից մասսա-
յական բողոքներ կազմակերպելու փոխարեն, դործա-
դիր կոմիտեն վորոշում և ընդունում, վորն ասում է:
«Փորձադիր կոմիտեն այն կարծիքին և, վոր հետաղա-
քայլերը վոչ միայն ավելորդ են, այլև նրանք մինչեւ
իսկ անհարմար են միջադային կոռպերատիվ շարժ-
ման վարկի տեսակետից»: Այդ վորոշումից մի քանի
ամիս անց փակվում և Խտալիայի սպառողական կո-
ռպերատիվների միությունը և գույքը զրավվում: Այդ
քոլորի գեմ «Ալիանսը» չի կարողանում ավելի հար-
մար վորոշում հանել, քան դիմել Մուսոլինին և
խնդրել վոր «Ալիանսը», լիակատար հավատ տածելով
դեպի ձեր կառավարությունը, խնդրում և սպառողա-
կան կոռպերատիվների միությանը (ազգային լիդա)
ցույց տալ նույնպիսի պաշտպանություն, ինչպես վոր

այդ տեղի յե ունենում բոլոր որինական քաղաքացիների նկատմամբ»: Այնուհետև Մոսկվայից պըստին առաջնորդ նախաձեռնությունը վերցնում է իր վրա և ընկեր Լազովսկու միջնորդ, հեռագրով դիմում է «Ալիանսին», առաջարկելով Փաշիզմի կողմից պրոֆմիությունների և կոռպերացիայի նկատմամբ սկսած հալածանքների դեմ պայքարելու համար կազմել միասնական ճակատ: «Ալիանսը» մի քանի ամիս այդ հեռագրին չի պատասխանում: Միտյն 1926 թ. Համագոյի կոնգրեսում գործադիր կոմիտեն զեկուցում է, վոր Փաշիստների հալածանքները կոռպերացիայի նկատմամբ ավելի յին ծավալվում, վոր այդ առթիվ կան բազմաբնիվ բողոքներ և առաջարկներ: Սակայն, «գործադադիր կոմիտեն մերժում է այդ բոլոր առաջարկները, քանի վոր, համաձայն կանոնադրության, «Ալիանսը չիզոք և քաղաքական և կրօնական հարցերում: Ամեն մի յելույթ քաղաքական իմաստով կարող է այնպիս բացատրվել, վոր միաս կպատճառի համարական կոռպերատիվ շարժմանը»:

Թորհրդային կոռպերացիան ի հարկե, մեծ հաջողությամբ մերկացնում է «Ալիանսի» այդ վոլորմելի և անկարող քաղաքականությունը և ավելորդ անգամ մատնանշում քաղաքական չեղոքության սկզբունքի մասակարությունը, նրա հականեղափախական բնույթը հեղափոխական շահերի տեսակետից:

5. Ծրագրային և կազմակերպչական խնդիրներ

«Ալիանսը» իր գոյության ամբողջ ընթացքում անտեսական և կոռպերատիվ հիմնական խնդիրների վերաբերմամբ չի ունեցել վորոշակի ծրագիր: Նա,

հակառակ դրան, բավականացել ե բազմիցու տնգամ
դատարկ ֆրազներ դործածել և խոսել քաղաքական
չեղոքության մասին, ամեն անգամ հրաժարվելով
բանվոր դասակարգի առաջ ծառացած հիմնական խըն-
դիրները լուծելու պատասխանառվությունից։ Այդ
իսկ պատճառով «Ալիքանսը», վորապես կոռպերատիվ
ինտերնացիոնալ, վճռի միայն վորեւս արժեք չեր ներ-
կայացնում, ընդհանուր առմամբ բանվորական շարժ-
ման մեջ այլև առանձին դեր և ներգործական ազդե-
ցություն չուներ նաև միջազգային կոռպերատիվ
շարժման խնդիրների նկատմամբ։ Դրան պերճախոս
որինակ կտրող և ծառայի ֆաշիզմի դեմ պայքարելու
հարցը։ Խորհրդային կոռպերացիայի ներկայացուցիչ-
ները համարյա բոլոր կոնգրեսներում դրել են ծրա-
գիր ունենալու անհրաժեշտության հարցը, սակայն
այդ խնդիրը մինչեւ այժմն ել մնում է անլուծելի։ վո-
րովինետև ծրագրի հետ կապված են այն հիմնական
սկզբունքները, վոր միջնեւ որս ել հեղափոխական և
ռեֆորմիստ կոռպերատորների միջև առաջ են բերել
լուրջ բաղխումներ և բուռն պայքար։ Այնուամենայ-
նիվ «Յենտրոսոյուզի» ներկայացուցիչները «Ալիքան-
սի» գործունեյության համար Ստոկհոլմի կոնգրեսի
քննությանն են ներկայացնում հետեւյալ ծրագիրը։

«Կոռպերատիվ շարժման փորձը բոլոր յերկրնե-
րում ապացուցեց, վոր կոռպերացիան բանվոր դասա
կարգի պայքարի հետ անքակտելիորեն կապված ե և
կախում ունի նրանից։ Բոլոր դեպքերում, յերբ կոռ-
պերացիան պաշտպանել և այդ համագործակցությու-
նը տվել ե գրական հետեւանքներ ինչպես կոռպերա-
տիվ շարժման համար, այնպես ել ամբողջ բանվոր

գասակարգի համար: Իսկ կոռպերացիայի մեկուսացումն աշխատավորների պայքարից կործանարար ազգեցությունն է ունեցել կոռպերատիվ շարժման վրա և ծառայել և բաւրժուազիայի շահերին, Կոնդրեսն արտահայտվում է հոգուտ այն բանի, վոր միջաղպային կոռպերատիվ ՇԱՀԻՐԱՆԱՐՃ, վորպես միջաղպային կոռպերատիվ շարժման կազմակերպություն, սեաք և իր տառջ զնի այնպիսի խնդիրները, վորոնք բղխում են բանվոր դասակարգի շահերի պաշտպանության անհրաժեշտությունից և պնդում և ծրագիր ունենալու անհրաժեշտության վրա, վորը պետք և արտահայտի պրոլետարիատի քաղաքականությունը: Այդ ծրագիրը պետք և զեկովար ուղեցույց լինի մեր շարժման գործունեցության համար և ընդունելու յի սիստեմատիկ պայքարի անհրաժեշտության գործադրումներն պետքենամ թանգության, այն հարկերի և մաքսերի, վորոնք իշեցնում են մասսաների ապրուստի մակարդակը: Այդ ծրագրի մեջ պետք և արտահայտվի իմպերիալիստական պատերազմների և ֆուչիզմի դեմ պայքարելու անհրաժեշտությունը, պետք և մատնանշի համագործակցության անհրաժեշտությունը միջաղպային կոռպերատիվ և ընդհանուր բանվորական շարժման շահերի միջև, անհրաժեշտ և պնդել բանվոր դասակարգի բոլոր քաղաքական, պրոֆեսիոնալ և անականական կազմակերպությունների համագործակցության վրա, վորպես մարտունակությունն ուժեղացնող մի միջոցի՝ կապիտալիստական ուժերի զեմք:

Այս նախագիծն, ինչպես մենք տեսնում ենք, իր մեջ ամփոփում և այն բոլոր մարտական խնդիրները, վոր այսոր գրված են բանվոր դասակարգի և կոմու-

նիստական շարժման առաջ Բնական և, վար այսպիսի սկզբունքային խնդիրների հարուցումը «Ալիտնսի» մարմիններում, վոչ միայն հետաղնդում և այն անմիջապես իրագործելը, այլև նրա զվարկոր նպատակն եւ այդ խնդիրների շուրջը համախմբել և կտղմտկերպել միջազգային բանվոր դաստկարգը և միլիոնավոր մասսանները հանուն կոմունիստական շարժման:

«Ալիտնսի» կանոնագրության մեջ կարենք տեղ երանում առանձին յերկրների կոռուկիրատիվ կազմակերպությունների ներկայացուցչության խնդիրը: Խորհրդային կոռուկերացիայի ազդեցության ծավալումը, ազա՛ և Ալիտնսի» կոնգրեսներում ընդդիմադիր տարրերի ուժեղացումը հարկագրում և «Ալիտնսի» ռեֆորմիստ անդամների ամենահետադիմական թեմա՝ հանձինս գերմանական ներկայացուցչության, հարց դնել խորհրդային ներկայացուցիչների կենտրոնական կոմիտեյում ունեցած թիվը պահանջնելու մտսին— 14-ից հասցնելով 7-ի: Այդ պատճառաբանվում եր նրանով, վոր Խորհրդային Միությունը պետք և ճանաչվի վորպես մեկ պետություն: Նրա մեջ մտնող Ռէկրայսան, Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը և Բելոռուսիան չեն կարող ճանաչվել ինքնուրույն պետություններ և ուրինն իրավունք չունեն իրենց առանձին ներկայացուցիչներ ունենալ «Ալիտնսում»: Այս հարցի շուրջն ստեղծվում և չափսնված պայքար և այն շարունակվում է 3 տարի: 1926 թ. այդ հարցը «Յենտրոսույզը» բարձրացնում է, ներկայացնելով մանրամասն տվյալներ խորհրդադիրին սահմանադրությունից հանրապետական պետությունների կատարյալ անկախության մասին: Այնուհետև ինքնուրույն

հանրապետությունների կողմից ևս ստացվում են իրենց ինքնուրուցնությունն ապացուցող տվյալներ։ Հարցի վերջնական լուծումը հետաձգվում է մինչև Ստոկհոլմի վերջին կոնգրեսը, վորակել խորհրդային կոռպերացիան տանում և կատարյալ հազմանակ, պահանջելով իր ունեցած տեղերը «Ալիանսում»։ Նույն Ստոկհոլմի կոնգրեսում խորհրդային կոռպերացիան մի ուրիշ հազմանակ ել և տանում։

Նկատի ունենալով, վոր «Ալիանսի» 60 միլիոն (1927 թ.) կոռպերացված անդամներից 20 միլիոնը պատկանում է խորհրդային կոռպերացիային, այդ պատճառով Ցենտրոսոյուղն առաջարկում է ոռւսական լեզուն ճանաչել պաշտոնական լեզու՝ ֆրանսիայի, Գերմանիայի, և անգլիական լեզուների հավասար։ Այդ հարցի վերջնական լոծումը հանձնվում է կենտրոնական կոմիտեյին հատուկ հանձնաժողովի միջոցով հարցը լուծելու համար։ Կենտրոնական կոմիտեն վորոշում է ճանաչել ոռւսական լեզուն պաշտոնական լեզու։

Միջազգային կոռպերատիվ ինտերնացիոնալի մեջ խորհրդային կոռպերացիայի մինչև այժմ տարած աշխատանքները՝ հեղափոխական կոռպերացիայի կազմակերպման և կոռպերացված մասսանների հեղափոխականացման հարցում՝ ունենում ե միջազգային հակայական նշանակություն։ «Ալիանսի» բոլոր մարմինները՝ կոնգրեսները, կենտրոնական և գործադիր կոմիտեները, պրոպագանդայի տեսակետից լավագույն վայրեր եին հանդիսանում։ Բացի այդ մեծ ձավալ և ընդունում «Ալիանսի» հակահեղափոխական, ռեֆորմիստական և դավաճանական քաղաքականության

մերկացումը թերթերի և գրականության միջոցով։
Այս բոլորը մեծ չափերով նպաստում եյին հեղափո-
խական կոռակերացիայի դարդացման ու ծավալման
գործին։ Այս հանգամանքն առաջ եր բերում «Ալիան-
սի» ռեֆորմիստ ղեկավարների բանակում չտեսնված
ատելություն և թշնամություն ղեղի խորհրդային
կոռակերացիան և սարսափ ազգում՝ տեսնելով կոմու-
նիզմի հաղթական շարժման հետանկարները։

Այսպիսով, «Ալիանում» սկսվում ե լուրջ և
սիստեմատիկ պայքար խորհրդային կոռակերացիայի
դեմ։ Ֆրանկուրտում գործադիր կոմիտեյի քննու-
թյան կենտրոնական հարցը դառնում ե Կոմինտերնի
կողմից «Ալիանսի» գործունեյության մասին հարու-
ցած քննադատությունը։ Առանձնապես մեծ հուզ-
մունք ե արտահայտում գերմանական կոռակերատիվ
բյուրոկրատիան։ Այստեղ պահանջ ե գրվում, վոր
«Ալիանսի» բոլոր անդամները հավաստիացնում տան,
թե Կոմինտերնի տեսակետը չեն բաժանում։ Ռուսա-
կան պատգամավորությունը մեղադրվում ե այն բա-
նում վոր իբր «Ալիանսի» քաղաքական չեղոքու-
թյունը խախտում ե, վոր կոմունիստական պրոպա-
գանդ ե մզում և դրանով սպառնալիք ստեղծում
«Ալիանսի» միասնականության խախտման համար։
Այդ պատճառով մի քանի անգամ հարց ե գրված յե-
ղել հեռացնելու խորհրդային կոռակերացիայի ներկա-
յացուցիչներին «Ալիանսից»։

Չնայած ռեֆորմիստների կատաղի հարձակում-
ներին և պրովոկացիաներին, խորհրդային կոռակերա-
ցիայի ազդեցությունը միջազգային կոռակերատիվ
շարժման վրա ավելի յե ծավալվում և խորանում,
տալով նրանց նոր ու նոր նվաճումներ։

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԿՈՌՄԵՐԱՑԻԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԹՎԵՐՈՎ

Առբերդոյցին սահմաններից զուրս, բուրժուական յերկներում կոռպերացիայի զարգացումը շատ սահմանափակ վիճակում և գոտնվում: Ավելին կարելի յե անել, այնուղի կոռպերացիայի զարգացումը յննթակա յե կտապիտակիզմի հղորագույն ազգեցությունը, Խոշորագույն արտեհների ու արեսուների ֆինանսական թագավորությունը կոռպերացիայի զարգացումը պահում և համեստ սահմաններում և նրան զարձնում և միանգամայն անվնաս կտազմակերպություն՝ կապիտալիզմի հիմքերը խորառակելու տեսակետից: Ենթե մեզ մոտ կոռպերացիան հանդիսանում և յերկրի սոցիալիստական շինարարության հղորագույն ազգակներից մեկը, ապա բուրժուական յերկներում կոռպերացիան չնայած նրա մեծ մասով ոյրովետարական կտազմի, մուռմ և սուկավաթիվ և արտօնյալ վիճակում գանվող իր անդամների տռորյա սոսկական շահերին ծառայող մի կազմակերպություն: Ուրիշ կերպ չի ել կտառող լինել, մինչեւ վոր բուրժուական յերկներում պրոլետարիատը բուժուական իշխանությունը չտապալի և չհաստատի իր դիկտատուրան—կոռպերացիայի զարգացումը չի կարող ստանալ այն չտեսնված թափը և այն նշանակությունը, ինչ վոր այժմ ժողովրդական տընտեսության համար ունի խորհրդային կոռպերացիան:

Այժմ տեսնենք թե բուրժուական յերկրներում կոռպերացիան զարդացման ինչ ընթացք և բոնիլ և թվական տվյալներով համեմատենք խորհրդային կոռպերացիայի զարդացման հիմնական ցուցանիշների հետ:

28 յերկրների անդամների յեկ տջանառության դիմավիճական

Յ ե ր կ ը ն ե ր	Անդամների թվը,		առևտքական ցուցանառութ.	
	1914թ.	1927թ.	1914 թ.	1927 թ.
Առգիրդային Միություն	1,4 մլ.	16 մլ.	250 միլ.	5,434 միլ.
Անգլիա	3 >	5,5 >	879 >	1,998 >
Գերմանիա	1,7 >	2,9 >	246 >	430 >
Ֆրանսիա	0,8 >	1,7 >	126 >	142 >
ՀՀ այլ յերկրներ միասին	1,7 >	4,9 >	304 >	1,056 >
Ըստամենք	8,6 >	31 >	1,805 >	9,061 >

Այս թվական տվյալները խորհրդային կոռպերացիայի աճման չտեսնված թափ և ցուցանառութ, վորը վոչ մի գեղըռում հնարավոր չի վորեն համեմատության մեջ դնել բուրժուական յերկրների կոռպերացիայի ռզարդացմանը չափերի հետ:

Ենթե մենք վերցնենք խորհրդային կոռպերացիայի ահսակարար կշիռը իւր բոլոր ցուցանիշներով և համեմատենք 27 առանձին բուրժուական յերկրների կոռպերատիվ շարժման թվերը ամբողջը միասին, առա մենք կտեսնենք, վոր 1927 թվին, 28 յերկրների 31 միլիոն կոռպ անդամների մեջ խորհրդային կոռպերա-

ցիան ունի 16 միլիոն, կամ 50,00% ից ավելին: Առեւրական շրջանառությունը, վոր բոլորը միասին կտղմում և 2 միլիորդ սուրբի, այդ գումարից խորհրդային կոռպերացիային բաժին և ընկնում 5,5 միլիորդ—կամ 60,00% ից ավելին: Այդ նույն 28 յերկրների կոռպերատիվ ձեռնարկությունների արտադրությունը կազմում և մեկ միլիորդ և 200 միլիոն ոռւբլի կամ կեսից ավելին: Այն ժամանակ, յերբ 1927 թվականից հետո խորհրդային կոռպերացիայի անդամների աճումն ել ավելի մեծ չափերի յե հոսնում—մեկ տարվա ընթացքում 16 միլիոնից բարձրանում և մինչև 23 միլիոնի, ընդհակառակը, բուրժուական յերկրներում կոռպերացիայի անդամների թիվը սկսած 1925/26 թվերից մի շաբաթ հիմնական յերկրներում սկսում և նվազել:

Որինակ՝ Գերմանիայում 1624 թ. յեղել և 3,505 հազար կոռպ անդամ, իսկ 1927 թվականին կոռպանդամների թիվը դարձել է 2,932,000 հոգի—այսինքն 3 տարվա ընթացքում կոռպերատիվ անդամների թիվը պակասում և 573,000 մարդով: Ի հարկե կոռպերատիվից հեռացվողները յեղել են բացառապես անդորք և չնչին ոռճիկ ստացող բանվորները:

Կապիտալիստական յերկրներում կոռպերացիայի աշխատանքների մեջ կա մի սկզբունք: Դա «թղթյադինվորներ» ին կոռպերատիվից հեռացնելու միջոցնե: «Թղթյադինվորներ» կոչվում են կոռպերատիվի այն չքավոր բանվոր անդամները, վորոնք ի վիճակի չեն կովուրատիվի վարչության կողմից նախապես վորոշված գումարի սահմաններում գնումներ կատարել տարվա ընթացքում: Այսինքն մի կոռպերատիվի ան-

դամ, վար տարիկան 600 կտմ 1000 ռուբլուց պակաս արժեքի ասլրանք գնեց իր կոռակերատիվից—նա այլեւ իրավունք չունի կոռակերատիվի անդամ մնալ: Նրան հեռացնում են կոռակերատիվից: Այս պատճառաբանությամբ վերջին տարիներս Գերմանիայում կոռակերատիվից հեռացվել ե 500,000 չքավոր բանվորներ, Զեխտ Սլովիայում 150.000, Վենգրիայում 80,000 և այլն:

Բացի հիշատակված յերկրներից, մասցաւ յերկրներում յեկս կոռակ անդամների թիվը պակասում ե այսպես, որինակ՝ Ավստրիան 1926 թ. ուներ 3,8 հազար կոռակ անդամ, 1927 թ. նա կրճատվեց մինչև 298 հզ., Դանիան յեղել է նույն թվերին 223 հզ., դարձել է 321 հզ.: Մի խոսքով, բոլոր յերկրներում, վորպիս ընդհանուր կանոն, կոռակ անդամների թիվը կամ նվազել է կամ փոչ մի աճում առեղի չի ունեցել:

Ծնորհիվ այդ իրականության, վերջին տարիների ընթացքում կոռականդամների պրոլետարական կողմը զգալապես նվազել է և տեղի յետքել մանր բուրժուական խավերին: Ստորև բերված աղյուսակը պարզացում է այդ փաստը՝

Գերմանիայի սպառկառապերացիայի միության սոցիալական կողմը

	1903 թ.	1923 թ.
Արդյօւնաբերական բանգ. և ծառայող	78,32%	67,66%
ինքնուրույն ձեռնարկատերեր	7,58 »	6,09 »
» հողատերեր	1,70 »	3,31 »
Ազատ պրոֆես. տեր և չինովակներ	4,18 »	9,03 »
Գյուղատնտ. բանվորներ և ծառայող.	2,95 »	3,12 »
Անվերս պրոֆեսիայի մարդիկ	4,77 »	10,80 »

Այսպիս, մենք տեսնում ենք, վոր այդ տարիների ընթացքում արդյունաբերական պրոլետարիատի տեսակարար կշիռը 28,32% ից իջել է մինչև 67,66% -ի հակառակ գրան մանը բուրժուական խավերի առկուը 4,68 ից բարձրացել է 9,03% իւ Շվեդիայում նույնպիս 1913 թ. բանվարների տեսակաբար կշիռը յեզել է 61,20%, իսկ 1927 թ. նա դարձել է 49,8% Այս պրոցեսը 1927 թվականից հետո ավելի ես մեծ թափ և ստանում:

Այդ բանին մեծապես նպաստում է բուրժուական յերկրներում կտակիտալիզմի առրած սիստեմատիկ տնտեսական տագնուպը, դաստիարակային պայքարի սրումը, հեղափոխական ալիքի չտեսնված վերելքը և կոմունիստական շարժման չտեսնված ռնումը։ Այս հոյտառության իրադարձությունները չեյին կարող իրենց խորը տղղեցությունը չթողնել Արեմայան Յեգրովայի կոռպերատիվ շարժման վրա։ Այնտեղ, ուր կոռպերացիայի զեկավարությունը դանվում է զլխավորապես ռեֆորմիստ-հետադիմական ու Փաշիստական տարբերի ձեռքում, սարսափած կոմունիստական շարժման ծավալման վտանգից, բոլոր միջոցներով աշխատում եյին հեռու պահել կոռպերատիվ շարժումը այդ տհավոր վտանգից։

VII

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՈԹԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՈՒՄԸ

Զանազան յերկրներում, կոմունիստական շարժման ծավալման և ուժեղացման հետեանքով, կոմունիստական կուսակցությունների ազդեցությունը տարածվում է նաև կոռպերատիվ շարժման վրա:

Տարբեր յերկրների հեղափոխական կոռպերացիայի փորձի հիման վրա՝ համախմբելու և անհրաժեշտ զեկավարությունը միջազգային կոռպերատիվ շարժման նկատմամբ առահեռվելու համար, անհրաժեշտ համարվեց յերրորդ Կոմ. Խնտերնացիոնալին կից ստեղծել կոռպերատիվ սեկցիոն: Այդ կոռպերատիվ սեկցիայի միջոցով և, վոր Կոմինտերնն իրագործում է իր զեկավարությունը:

192! թվականնին Կոմինտերնի յերրորդ կոնֆրենց ըզունում և կոռպերացիայի մասին թեզիներ, վորոնց միջոցով կոմունիստ կոռպերատորներին արրվում եյին իրենց աշխատանքների համար զեկավարող սկզբունքներ:

Ստորև տալիս ենք այդ թեզիները:

1. Պրոլետարական հեղափոխությունների դարեշրջանում հեղափոխական կոռպերացիայի առաջ ծառացած և յերկու խնդիր. 1) ոգնել աշխատավորական մասսաներին քաղաքական իշխանությունն իրենց ձեռքը ձգելու պայքարի գործում. 2) այնտեղ, ուր

այդ աշխատանքը կատարված ե, ոգնել նրան սոցիալիստական շինարարության գործում:

2) Հին կոռպերացիան ձգտել ե և ձգտում ե խուսափել հեղափոխական պայքարից և իր աշխատանքներն ուղղել զեզի ուժորմիզմը: Նա քարոզում է խաղաղ ճանապարհով սոցիալիզմին հասնելու զաղափարը, առանց պրոլետարիատի զիկատուրայի իրականացման: Նա քարոզում է կոռպերացիայի համար քաղաքական չեղությունն, իսկ իրականում այդ գրոշակի տակ կոռպերացիայի ուժերը յենթարկում ե իմպերիալիստական բուրժուազիայի քաղաքականության նպատակներին: Նրա իրականացմը բավականանում ե լոկ բառերով, իսկ իրականում աշխատավորների միջազգային համելաշխությունը փոխարինում ե բանվոր զաստակարգի և իր յերկրի բուրժուազիայի համագործակցության:

Հին կոռպերացիան իր այդ ամբողջ քաղաքականությամբ չի նպաստում հեղափոխության զարդացմանը, այլ ընդհակառակը, նրան խանգարում ե. չի ոգնում, բայց մնասում ե բանվոր դաստակարգի պայքարին:

3) Բոլոր տեսակի և ձեերի կոռպերացիան չի կարող համազոր արժեք ներկայանալ պրոլետարիատի հեղափոխական նպատակների համար: Ամենից շատ արժեք ե ներկայացնում սպառողական կոռպերացիան: Բայց նրա մեջ ել կան այնպիսի կոռպերատիվներ, վորոնք համախմբել են բուրժուական տարրեր: Այդպիսիները վոչ մի դեպքում չեն անցնի պրոլետարիատի կողմը, նրանց հեղափոխական պայքարի ժամա-

նակ։ Այդ ընդունակ և անելու միայն բանվորական կոռպերացիան քաղաքում և գյուղում։

4) Բոլոր կոռպերատիվներում կոմունիստ կոռպերատորները, համապատասխան իրենց քաղաքական պայմանների, պետք և կազմակերպեն ազատ կամ դադարնի բջիջներ, վորոնք պետք և աշխատեն զեկավարող դիրք ձերել կոռպերատիվներում։

5) Այն գործնական խնդիրները, վոր այժմ կանգնած են արևմայան հեղափոխական կոռպերացիայի առաջ, լրիվ կերպով կուրվագծվեն աշխատանքի պրոցեսում։ Սակայն, Հնարավոր և դրանցից մի քանից հենց այժմից նշել։

ա) Կոմունիստական գաղափարների բանավորության ազիտացիա և պրոպագանդա, կոռպերացիայի ազատագրումը բուրժուազիայի և համաձայնողականների զեկավարությունից ու նրանց ազդեցությունից։

բ) Կոռպերացիայի մերձեցումը կոմունիստական կուսակցություններին և հեղափոխական պրոֆմիություններին, կոռպերացիայի ուղղակի թե անուղղակի մասնակցությունը քաղաքական պայքարին՝ գործողություններին, ցույցերին և քաղաքական կամպանիաներին մասնակցելու ճանապարհով, նյութական ուժանդակություն կոմունիստական կուսակցությունների թերթերին, գործադուլներին, լոկաուարի յենթարկվածքանվորներին։

գ) Պայքար միջազգային բուրժուազիայի իմակերիալիստական քաղաքականության դիմ, մասնավորապես՝ Խորհրդային Միության և այլ յերկրների ինտերվենցիայի դիմ։

գ) Վոչ միայն զազափարական կապ ստեղծել աարբեր յերկրների բանվորական կոռուերատիմների միջև, այլև ունենալ գործնական կառ միմիւնց հետ:

յե) Պայքար մղել Խորհրդային Միության հետ զուտափույթ առնտրական փոխարքարերություններ ստեղծելու համար:

զ) Բուրժուական յերկրների կոռապերատիվ կազմակերպությունները կոնցեսիաների միջոցով լայն մասնակցություն պիտի ունենան Խորհրդային Միության ընտրական հարստությունների շահագործման խնդրում:

Կոմինտերնի յերրորդ կոնգրեսից հետո, Կոմինտերնի բոլոր կոնգրեսները հասկապես զրագվում են միջազգային կոռապերատիվ շարժման խնդիրներով և մշտակամ ավելի գործնական և մանրամասն դիրքետիվմեր: Բացի այդ 1923 թ. և 1924 թ. տեղի յեն ունինում կոմունիստ կոռապերատորների միջազգային կոնֆերենցիաներ, վորոնք նույնպես խոշոր նշանակություն են ստանում կոմունիստների կոռապերացիայում կատարելիք աշխատանքների տեսակետից: Յեկիսկապես բոլոր յերկրներում, կոմունիստական շարժման զարգացման և ծավալման զուգընթաց, կոմինտերակցությունները բավական զգալի նվաճումներ են անում կոռապերատիվ շահժման մեջ: Այսպես՝ Ֆրանսիայում մի քանի տարի յե ինչ Փարիզի ամենախոշոր կոռապերատիվ «Բելլվելլուտազը» ը գտնվում է կոմունիստների ղեկավարության ներքու նույն Փարիզում կան նաև մի քանի ուրիշ կոմունիստական կոռապերատիվներ՝ ճաշարանների «Նոր ընտանիք» կոռապերատիվ ընկերություն, կոռապերատիվ «Համբարձում»

նել» և ուրիշները: Ամբողջ Ֆրանսիայում այժմ մոտ 100 կոռպերատիվ կողմակերպություններ գտնվում են կոմունիստների ձեռքին: 1820 թ. ֆրանսիական կոռպերատիվ կոնգրեսում կոմունիստ պատղամավորները կազմում եյին 28 հոդի, 1922 թ. համառում է 200-ի, իսկ 1928 թ. այդ թիվը դասնում է 816:

Գերմանիայի ծոսեն քաղաքում կայացած համապերամական կոռպերատիվ համագումարում 60-ի չափ կոմունիստ պատղամավորներ են ընտրում: Բերլինի կոռպերատիվի վերջին ընտրություններին կոմունիստներն սահմանում են բոլոր ձայնների 36%⁰-ը: Իսկ Հալլում՝ 75 տոկոսը: Սակայն, Գերմանիայում այսպիսի կոռպերատիվներ, վորոնք ունեն կոմունիստական վարչություններ, դեռևս այնքան ել շատ չեն: Այզպիսիները կան մի քանի զոչ միծ արդյունաբերական քաղաքներում (Միրզե-բուրգ, Հալլա, Շվարցենբերգ, Լեմբախ և այլն) կոմունիստական կոռպերատիվները Գերմանիայում մեծ հալածանքների յին յենթարկվում վերադաս կոռպերատիվ մարմինների կողմից: 1926 թ. կոռպերատիվների հենարոնական միությունը սպառնում է՝ անգլիական ածխահատների գործադուլին ոժանդակելու դեպքում՝ հեռացնել միությունից նման կոռպերատիվներին:

Անգլիայում նույնպես նկատելի յե կոմունիստների ագդեցությունը կոռպերատիվներում: Բավական ուժեղ և կոմունիստների ազգեցությունը Զեխո-Սլավակյաի կոռպերացիայում: Այստեղ բազմաթիվ կոռպերատիվների վարչությունները գտնվում են կոմունիստների ձեռքին:

Նույնպիսի հաջողություն ունեն կոմունիստները նաև այլ յերկրներում:

Խնչպես տեսնում ենք, կոմունիստական կուսակցությունների ազգեցությունը միջազգային շարժման վրա վճռ միայն գաղափարական է, այլ և ընդունել ե խիստ գործնական բնույթ, նա սատցել է մասսայական առողջա աշխատանքների կերպարանք:

Այդ տեսակետից կոմունիստների այդ գործնական աշխատանքների ծավալումը կոոպերացիայում ստանում է բանվոր զառակարգի ընդհանուր պայքարի շահերի տեսակետից՝ շատ մեծ նշանակություն։ Կոոպերացիայում կոմունիստների այդ գործնական աշխատանքների ծավալումն աչքի առաջ ունենալով, Կոմինտերնի V-րդ կոնգրեսը 1924 թ. մի քանի խիստ գործնական վորոշութերը և կայացնում, վորոնք կոմունիստների հետագա աշխատանքների ճիշտ ղեկավարության տեսակետից մեծ նշանակություն են ունենում։

Այդ վորոշութերն ասում են.

1) Կոմունիստական կուսակցության բոլոր անդամները պետք ե լինեն կոոպերացիայի ակախվ անդամներ։ Նրանք պարտավոր են կոոպերատիզմներում ստեղծել կոմունիստական ըջիջներ, կապելով նրանց ոլորեատարական այլ ընդիմադիր աշարերի հետ և դարձնելով այն ֆրակցիա։ Ամեն մի յիշույթ պետք ե հիմնավոր կերպով նախապատրաստվի կոմունիստական բջիջներում, վորից հետո նրա վորոշութերը պետք ե սիստեմատիկորեն կենսագործվեն կոմունիստների կողմից։

2) Կոոպերատիվ աշխատանքներին վերաբերող բոլոր հարցերը պետք ե քննության առարկա դառնան կոմունիստական կուսակցության բոլոր մարմինների կողմից։ Բացի այդ, բոլոր կուսակցական մարմինները պետք ե յետանգուն պաշտպանություն ցույց տան կոպերատիվ աշխատանքներին։

Կոռապերատիվները պետք և մասնակցություն ունենան՝ ինչպես քաղաքական, տյնալես և տնտեսական բնույթ կրող բոլոր մարտական կազմակերպություններին:

3) Ամեն մի կոմունիստական կուսակցություն կոռապերատիվ աշխատանքների համար պետք և տրամադրի իր յեռանգուն և ընդունակ ընկերներին:

4) Կուսակցական մամուլը կոռապերատիվ հարցերին պետք և մեծ տեղ տա: Ամենաորյա թերթերը, հնարավորության սահմաններում, պետք և հրատարակեն կոռապերատիվ հավելվածներ: Կոմունիստական կոռապերատիվ գրականությունն ավելի մեծ չափով պետք և հրատարակվի ու տարածվի, քան մինչև այժմս և յեղել:

5) Կոմինտերնի 3 և 4-րդ կոնգրեսների, ինչպես և յերկրորդ պլաֆինտերնի կոնգրեսի վորոշումները պլաֆմիությունների և կոռապերացիայի միասնարար գործելու մասին, պետք և անցկացվեն բոլոր յերկըրներում:

Այսպիսով կոմունիստների նվաճումները միջազգային կոռապերատիվ շարժման մեջ հսկայական են: Նրանք գնալով ավելի մասսայական բնույթ են ստանում և դառնում են, ու պետք և դառնան ել, մեր սոցիալիստական հեղափոխության մեծ գործում, մարտական մյուս կազմակերպությունների հետ միասին, կարեոք գործոններից մեկը:


Միջազգային կոցպերացիայի որը այդ տեսակետից հանդիսանալու յե մի լավագույն միջոց՝ կոռապերացիայի հեղափոխական ուժերի հավաքման, միլիոնավոր կոռապերացված մասսաններին կոմունիստա-

կան մարտական լոգունքների շուրջը կազմակերպելու
և նրանց տանելու զեղի առաջիկա դասակարգային
ահեղ բաղխումները։ Իսկ Խորհրդային Միության մեջ
միջազգային կոռակերացիայի որը լինելու յև սոցիա-
լիստական շինարարության հսկայական նվաճումների
ուղին։

Բուրժուական յերկրներում՝ դասակարգային քա-
ղաքական անողոք պայքար հանուն պրոլետարիատի
դիլտառուրայի հաստատման, իսկ մեղ մոտ՝ սոցիա-
լիզմի կառուցման գործում նոր ու նոր նվաճումներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կոռակերացիայի միջազգային տոնի նշանակությունը	3
2. «Ալիանսը» և նրա զարգացման հտապները	7
3. Պատերազմը և «Ալիանսը»	14
4. Հեղափոխական կոռակերացիան և նրա զարգացման հտապները	17
5. Խորհրդային կոռակերացիան և «Ալիանսը»	28
I Քաղաքական չեղոքություն	36
II Պրոֆմիությունների հետ սերտ կտապը	38
III Պայքար պատերազմի դեմ	40
IV Պայքար Փաշիզմի դեմ	42
V Ծրագրային և կազմակեցվածական խընդիրներ	46
6. Բուրժուական յերկրների և խորհրդային կոռակերացիայի զարգացումը թվերով:	48
7. Կոմինտերնը և միջազգային կոռակերատիվ շարժումը	53



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041512

[153]

A ii
41512

ԳԻՒԸ 15 ԿՐԹ.